Արձանագրություն N 2

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/59 ծածկագրով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով էլեկտրոնային աճուրդ գնման գործընթացով տնտեսական ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22.03.2024թ.
ժ. 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Առուստամյան
Անդամներ՝ Տ. Առաքելյան, Մ. Խաչատրյան
Քարտուղար՝ Մ. Ավագյան

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/59 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ԵՊՀ կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ կատարվել է մատակարարաման ժամանակացույցի փոփոխություն:

Պատասխանել էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի չափաբաժինների վերաբերյալ ստացված հարցումներին:

Հարցադրում N 1

Հարգելի պատվիրատու՝ 33-րդ չափաբաժնում լույսի գույնը նշված է 4500k, սակայն պետք է լինի 4000k, կամ առնվազն 4000-4500k, որպեսզի բավարարի մեկից ավելի մասնակցի: 38-րդ չափաբաժնում լուսատուի լայնությունը նշված է 105մմ, սակայն պետք է լինի 75մմ ինչպես որ նշված է 37-րդ չափաբաժնում: Խնդրում ենք վերանայել: Շնորհակալություն

Պարզաբանում N 1

Հարգելի գործընկեր,
33-րդ չափաբաժինի վերաբերյալ տեղեկացնում՝ենք, որ մեզ անհրաժեշտ է հենց 4500k գույնով լուսատու:38-րդ չափաբաժնի մասով տեղեկացնում ենք, որ մեզ անհրաժեշտ է հենց 105 մմ չափի լուսատու:

Հարցադրում N 2

41-րդ չափաբաժնի տեխ. բնութագրում հստակ չի հասկացվում թե խոսքը ինչ տեսակի լուսատուի մասին է: Խնդրում եմ տրամադրել լուսատուի տեսակի և չափսերի վերաբերյալ տեղեկություն: Շնորհակալություն

Պարզաբանում N 2

41-րդ չափաբաժնի մասով կարող ենք տեղեկացնել, որ մեզ անհրաժեշտ է ԼԵԴ տեսակի լուսատու:

Հարցադրում N 3

Չափաբաժին՝ 33.Լեդ լուսատու 36վտ -մեր պարամետրերն են՝ լուսատուն լուսադիոդ արտաքին կլոր 36W, 4200K, 3600Lm, φ229մմ, կարո՞ղ ենք մասնակցել 34.Լեդ լուսատու 22վտ - "Լեդ լուսատու սկավառակաձև, ներկառուցվող, 6սմ, 22վտ, 4000k Երաշխիքային ժամկետը մեկ տարի:" Կարծում եմ ինֆորմացիան թերի է նշված 6 սմ դա արտաքին թե՞ ներքին չափսն է: մեր պարամետրերն են՝ լուսատու լուսադիոդ ներքին կլոր շարժական ռիմլես 24W, 4200K, 2300Lm, Φ35-135*165մմ, կարո՞ղ ենք մասնակցել 35.Լեդ լուսատու 18վտ -Նշված չէ ի՞նչ գույն է հարկավոր 36. Լեդ լուսատու 24վտ -Նշված չէ ի՞նչ գույն է հարկավոր 40. Լեդ լուսատու 60x60 240 Վտ - Կարո՞ղ ենք 55W առաջարկել և մասնակցել 94.Զուգարանակոնքի բաքի մեխանիզմ -Նշված չէ՞ միացումը տակից, կողքից

Պարզաբանում N 3

Հարգելի գործընկեր տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն «հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը», ուստի 33-րդ, 34-րդ, 40-րդ չափաբաժիններին վերաբերող հարցադրումներին չեն կարող պատասխաններ տրվել: 35-րդ և 36-րդ չափաբաժինների մասով տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ է 6500 Կելվին գույնի լուսատու, իսկ 94-րդ չափաբաժնի մասով տեղեկացնում ենք, որ զուգարանակոնքի բաքի մեխանիզմի միացումը պետք է լինի տակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Ա. Առուստամյան

_____ Տ. Առաքելյան

_____ Մ. Խաչատրյան

_____ Մ. Ավագյան